ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

ԻՆՔՆՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայիս արագ փոփոխվող և զարգացող աշխատաշուկայում, գլոբալիզացման ենթատեքստում հասարակության կարիքների և պահանջմունքների վերանայման պայմաններում, նորագույն տեխնոլոգիաների գերիշխանության դարաշրջանում համակարգված և տեղին գիտելիք ստանալու հմտությունը դարձել է ժամանակի հրամայական: Անհատը, իր ուսուցման գործընթացում որքան շուտ սովորի, թե ինչպե՞ս պետք է սովորել, այնքան արդյունավետորեն կդիմակայի ժամանակի մարտահրավերներին և կապահովի իր լիարժեք տեղն ու դերը աշխատանքային և քաղաքացիական հասարակությունում (Fredriksson and Hoskins, 2007).:

Որպեսզի պարզ դառնա, թե այս կոմպետենցիան /Learning to learn/ ինչու՞ է այժմ համարվում Եվրոպական լեզվակրթության քաղաքականության հիմնաքարերից մեկը, ավելի լավ կլինի վերհիշենք Համակարգման բաց մեթոդի ներդրման և 2000թ-ին տեղի ունեցած Լիսաբոնյան գագաթաժողովի մասին, երբ Եվրամիության անդամ երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ քննարկվեցին ապագայի մարտահրավերների դիմակայման ռազմավարությունները և գործիքները: Այս վեհաժողովը հայտնի է որպես Լիսաբոնյան ռազմավարություն: Ըստ այս որոշման՝ հաջորդ տասնամյակում Եվրոպան պետք է դառնար աշխարհում ամենամրցունակ, դինամիկ զարգացող, կայուն աճ ապահովող տնտեսություն՝ տարեցտարի ավելացող աշխատատեղերով և սոցիալական հուսալի համախմբվածությամբ (paragraph 5, European Council, 2000): Ռազմավարական այս նպատակին հասնելու համար հստակեցվեցին որոշ տեսլականներ մակրո տնտեսական քաղաքականության, ներքին շուկայի, ինչպես նաև կրթության զարգացման նպատակով ներդրումների վերաբերյալ: Սա Եվրախորհրդի պատմության մեջ առաջին անգամն էր, երբ կրթությունն ու ուսուցումը միասին համարվեցին ընդհանուր ռազմավարական նպատակներին հասնելու գործիքներից մեկը: Տնտեսական ծաղկման և սոցիալական համերաշխության կարևոր գրավական համարելով կրթությունը՝ ԵՄ կրթական խորհուրդը ծրագրի իրականացման հրապարակեց երեք հիմնական նպատակներն ու խնդիրները.

բարելավել կրթական համակարգի որակն ու արդյունավետությունը,

ցկյանս կրթությունը հասանելի դարձնել բոլորին,

կրթության և վերապատրաստման համակարգը աշխարհի համար դարձնել հնարավորինս թափանցիկ և գրավիչ:

Եվրամիության աշխատանքային խմբի կողմից մշակվեց հիմնական ութ կոմպետենցիաների ցանկը, որն էլ

հաստատվեց 2006 թ-ի դեկտեմբերին՝ Եվրոպական Խորհրդարանի կողմից:

Հաղորդակցում մայրենի լեզվով,

Հաղորդակցում օտար լեզուներով,

Մաթեմատիկայի, այլ բնական գիտությունների և տեխնոլոգիայի առնվազն տարրական կոմպետենցիա,

Թվային տեխնոլոգիաների կոմպետենցիա,

Սովորել, թե ինչպե՞ս պետք է սովորել,

Սոցիալական և քաղաքացիական կոմպետենցիա,

Նախաձեռնության և ձեռներեցության կոմպետենցիա,

Մշակութային իրազեկություն:

Ինչպես տեսնում ենք, «Սովորել, թե ինչպե՞ս պետք է սովորել» կոմպետենցիան ութ հիմնական կոմպետենցիաների շարքում է: Այս հայեցակարգին տրվում է հետևյալ սահմանումը. «Սովորել սովորել» կոմպետենցիան սովորելու գործընթացում հետամուտ և պահանջատեր լինելն է, ինչպես նաև ինքնակրթության և խմբային աշխատանքների ճիշտ կազմակերպումը, տեղեկատվության և ժամանակի արդյունավետ կառավարումը: Այս կոմպետենցիան ենթադրում է անհատի կարիքների, հնարավորությունների իրազեկություն և սովորելու գործընթացում դժվարությունների ու խոչընդոտների սահուն հաղթահարում, ինչպես նաև ձեռք բերել, մշակել և կուտակել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ հետագա մասնագիտական կողմնորոշման, կյանքի տարբեր համատեքստերում կիրառման համար (Education Council, 2006 annex, paragraph 5):

«Սովորել սովորելը» ուսուցման գաղտնիքների բացահայտման գործընթացն է: Այն ներառում է մի շարք սկզբունքներ և հմտություններ, որոնց տիրապետման և հետևողականորեն կիրառման դեպքում, սովորելու գործընթացը կդառնա արգասաբեր և հիմնարար: Այս կոմպետենցիան հնարավորություն է տալիս սովորողներին գիտակցել.

Իրենց ուժեղ և թույլ կողմերը,

Ինչպե՞ս, ի՞նչ պայմաններում են իրենք նախընտրում սովորել,

Սովորելու դրդապատճառները և դրական տրամադրվածության, անխուսափելիորեն հաջողվելու ինքնավստահությունը,

Հիշողության զարգացման յուրահատուկ սկզբունքները,

Ժամանակի կառավարման կարևորությունը,

Սեփական զբաղվածության և կարիերայի ուղու հարթման և կառավարման գրավականը (The Campaign for Learning, 2007):

Քանի որ կրթությունը թեԲ քաղաքական, թեԲ մշակութային ասպարեզներում գոյատևման հիմնական գործոն է եղել հայերի համար, եվրաինտեգրման ճանապարհին գտնվող 21-րդ դարի Հայաստանի Հանրապետությունը նույնպես զերծ չի մնում աշխարհում տեղի ունեցող տարաբնույթ փոփոխություններից: Ներկայումս, երբ քաղաքակրթությունների շփումը տարեցտարի ավելի է սերտանում, հույժ կարևոր է դառնում միջազգային կյանքին ինտեգրվելը, համաշխարհային մշակույթին, պատմությանն ու անցուդարձին իրազեկ քաղաքացի լինելը: Մեզ համար նույնպես օրախնդիր հարց է կրթական համակարգում այնպիսի շրջադարձային փոփոխություններ կատարել, որոնք կնպաստեն սովորողների միջմշակութային փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը, հասարակական ներգրավվածության բարձրացմանը, ցկյանս կրթության կազմակերպմանը և ազատ տեղաշարժին: Որպեզսի հայ սովորողները մրցունակ լինեն տեղական և արտասահմանյան աշխատաշուկայում, ՀՀ-ում նույնպես սկսեցին վերանայել կրթության նպատակները,

դասավանդման մեթոդների, ծրագրերի թարմացման, դասագրքաստեղծման, կրթական հաստատությունների շենքային պայմանների բարելավման և շատ այլ հիմնահարցեր, որոնք կոչված են համակարգի համակողմանի ինտեգրմանը: Դպրոցներն ու բուհերը վերազինվեցին նորագույն տեխնոլոգիաներով, ուսուցիչներն ու դասխոսները վերապատրաստվում են, սովորողներն էլ ընտրության իրավունք ունեն:

Այնուամենայնիվ, վերը նշված բարեփոխումների կողքին պետք է նաև նշել, որ հայ սովորողը հոգեբանական տեսանկյունից վերազինման կարիք ունի: Աշխարհում վաղուց արդեն փոխվել է կրթություն ու գիտելիք ստանալու չափանիշները: Մանկապարտեզից արդեն սովորողը ազատ արտահայտում է իր կարծիքը, խնդրահարույց իրավիճակներում մտածում է յուրովի և քննադատորեն: Եվ այս իրողությունը քաջալերվում և ողջունվում է անհատի կրթություն ստանալու ողջ ընթացքում: Արդյունքում, ձևավորվում է ինքնուրույն, կյանքի մարտահրավերներին հաջողությամբ դիմակայող քաղաքացի: Այս առումով, հայ մանկավարժների անելիքները շատ են: Նրանց գերխնդիրը պետք է դառնա դաստիարակել առողջ բանականությամբ, քննադատական մտացողությամբ և ուսման հանդեպ դրական հակումներ ունեցող աշխարհաքաղաքացիներ, որոնք համաշխարհային հասարակության զարգացման ու բարգավաճման հիմնասյուները կհանդիսանան: Իսկ այս նպատակներն իրականացնել կարելի է միայն պլանավորված, երկարաժամկետ և հստակ տեսլականներ ունենալով: Մանկավարժի և սովորողի միջև պետք է հաստատվի հիմնավորված, փոխադարձ հետաքրքրության, կառուցողական երկխոսության մթնոլորտ: Պետք է կատարել սովորողների պահանջմունքների մշտադիտարկում, վերլուծել նրանց իրադրային և հեռանկարային պահանջմունքները: Հույժ կարևոր է, որ սովորողների մոտ ձևավորվեն հստակ դրդապատճառներ: Այս պարագայում միայն սովորողը կհաղթահարի սովորելու գործընթացի հետ կապված բազում բարդույթներ ու կարծրատիպեր և վերջապես, կսովորի, թե ինչպե՞ս պետք է սովորել:

Կարելի է առանձնացնել մի քանի արդյունավետ միջոցներ, որոնց կիրառմամբ կխթանենք ուսանողների սովորելու ցանկությունը.

Սովորողների քաջալերում.

Նրանք ակնկալում են ուսուցչի դրական վերաբերմունքը, և ավելի ջանասիրաբար են աշխատում, երբ գնահատվում է իրենց աշխատանքը: Պետք է գնալ բաց համագործակցության և գովել նրանց, նկատել հաջողություններ, լսարանը դարձնել ուսման համար ապահով և ցանկալի վայր:

Սովորողների ներգրավում ուսումնական ողջ գործընթացին.

Որպեսզի ուսանողների մեջ պատասխանատվություն սերմանվի, պետք է յուրաքանչյուրին ներգրավել աշխատանքի մեջ, հանձնարարությունները բաժանվի ըստ սովորողների նախասիրությունների և կարողությունների:

Սովորողների ստեղծագործական և քննադատական մտածողության խթանում.

Պետք է խուսափել միապաղաղ և մոնոտոն դասերից՝ դրանք համալրելով տեսալսողական նյութերով, գունավոր տրամագրերով ու դիագրամներով, ֆիլմերով, որոնք կլինեն թեմային համահունչ և նպատակային:

Իրական կյանքի հետ զուգահեռների և անքակտելի կապի ստեղծում.

Եթե սովորողը վստահ լինի, որ իր սովորածը հետագայում կկիրառի կյանքում, անպայմանորեն ավելի շահագրգռված կլինի հարստացնելու իր

գիտելիքների պաշարը (Candy, P. C. (1990)):

Այսպիսով, սովորելը, թե ինչպե՞ս պետք է սովորել, այնքան էլ դյուրին չէ, հաշվի առնելով այն փաստը, որ շատ ուսուցիչներ իրենք էլ չեն պատկերացնում, թե ինչպե՞ս պետք է այդ իրականացնել: Այնինչ, այս կոմպետենցիայի զարգացումը պետք է լինի երկուստեք իրականացման նպատակ, ամենօրյա աշխատանք, որը պետք է սկսել նախադպրոցական կրթությունից և կրի շարունակական ու հետևողական բնույթ:

Այս համալիր հասկացության ներդրումը կրթական համակարգ բազում քննարկումների առիթ է ցայսօր: Մայերը պնդում է, որ պետք է դպրոցներում ներդրվի հատուկ առանձին առարկա, որը կդասավանդի ուսման ռազմավարությունները, սկզբունքները, տեղեկատվության մտապահման արդյունավետ եղանակները, քննարկման և բանավեճի վարման ձևերը, և այլն (Mayer, 1988): Սակայն այսպիսի դասընթացների արդյունավետությունը կասկածի տակ է դրվում շատ մանկավարժների կողմից (Ramsden, Beswick, & Bowden, 1986): Նրանք կարծում են, որ այդ դասընթացները մեկուսացած են և կարող են պարունակել միայն ընդհանուր խորհուրդներ, ռազմավարություններ, իսկ արդյունքում կունենանք չկողմնորոշված և չմոտիվացված սովորողներ: Առաջարկվում է չառանձնացնել սովորել սովորեցնելու դասընթացը, այլ դա անել հիմնական առարկաների ուսուցման գործընթացին համընթաց:

Ռ. Սմիթը (1990) կարևորում է այն փաստը, որ սովորողին պետք է անպայմանորեն սովորեցնել, թե ինչպե՞ս պետք է սովորել, հատկապես երեք պատճառներով.

Քննությունների և ստուգարքների վերջնարդյունքների բարելավմանը նպաստող գործառույթ:

Ուղղիչ և շտկող գործառույթ, որի նպատակն է վերհանել, վերանայել խնդիրներն ու գտնել դրանց լուծումները:

Զարգացնող և համակարգված աշխատելու գործառույթ:

Սակայն, Մայլզի և Հուբերմանի կողմից անցկացված գիտափորձը ցույց է տալիս, որ հարցմանը մասնակցած 51 ուսուցիչներից 36-ը կարևորություն չեն տալիս սովորել սովորեցնելուն, պատճառաբանելով ժամանակի սղությունն ու ծրագրերի չափից դուրս հագեցվածությունը (Miles & Huberman, 1994): Իսկ մնացած 25-ը գտնում են, որ անհնար է հաջողվել առանց այդ կոմպետենցիայի: Ըստ նրանց՝ դա առաջին հերթին անհրաժեշտ է տնային հանձնարարությունների համակարգված կատարման համար, թույլ սովորողների խթանման և ուղղորդման համար:

Այսպիսով, ժամանակն է մեր կրթական իրականությունում ներմուծել նոր փիլիսոփայություն և մեթոդաբանություն, որոնք կարող են ամրապնդել սովորողների լեզվական գիտելիքները, մտածողության, դատողության և գործունեության անկախությունը՝ դրանք համակցելով հաղորդակցական կարողությունների և բազմալեզվության զարգացման միտումներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Biggs, J. B., & Rihn, B. A. (1984). The effects of intervention on deep and surface approaches to learning. In J. R. Kirby, Cognitive strategies and educational performance (pp. 279–293). Orlando: Academic Press.
2. The Campaign for Learning (2007) What is learning to learn? Web document: http://www.campaign-for learning.org.uk/projects/L2L/What%20is/What%20is%20L2L.htm
3. Candy, P. C. (1990). How people learn to learn. In R. M. Smith et al., Learning to learn across the life span (pp. 30–63). San Francisco: Jossey-Bass.
4. Education Council (2001) Report from the Education Council to the European Council. "The concrete future objectives of education and training systems" Brussels, 14 February 2001. Brussels: European Council.
5. Education Council and European Commission (2006) Modernising education and training: a vital contribution to prosperity and social cohesion in Europe joint interim report of the council and of the commission on progress under the 'education & training 2010' work programme. Brussels: Education Council and European Commission.
6. Fredriksson, U. and Hoskins, B. (2007) The development of learning to learn in a Europeancontext. Curriculum Journal Vol. 18, No.2, pp. 127 – 134.
7. Mayer, R. E. (1988). Learning strategies: an overview. In C. E. Weinstein, E. T. Goetz, & P. A. Alexander, Learning and study strategies. Issues in assessment, instruction, and evaluation (pp. 11–22). San Diego: Academic Press.
8. Miles, M. B., & Huberman, A. M. (1994). An expanded sourcebook. Qualitative data analysis (2nd ed.).
9. Ramsden, P., Beswick, D. G., & Bowden, J. A. (1986). Effects of learning skills interventions on first year university students' learning. Human Learning, 5, 151–164.
10. Smith, R. M. (1990). The promise of learning to learn. In R. M. Smith et al., Learning to learn across the life span (pp. 3–29). San Francisco: Jossey-Bass.

SYSTEM OF DEVELOPING SELF-LEARNING SKILLS

ANI MANUKYAN

Associate Professor of the Chair of Foreign Language Teaching Methodology, ASPU, PhD in Pedagogy

Learning to learn, one of the eight competences that EU has defined, comprises the disposition and ability to organize and regulate one's own learning, both individually and in groups. Learning to learn includes the ability to manage one's time effectively, to solve problems, to acquire, process, evaluate and assimilate new knowledge, and to apply new knowledge and skills in a variety of contexts — at home, at work, in education and in training. In more general terms, learning-to-learn contributes strongly to managing one's own career path.

Although 'learning to learn' should be an important part of daily life in secondary schools and classrooms, it turns out to be a very difficult goal to achieve. For most schools and for most teachers it is not even clear how 'learning to learn' should be operationalized and implemented.

СИСТЕМА ФОРМИРОВАНИЯ УМЕНИЙ САМООБРАЗОВАНИЯ

АНИ МАНУКЯН

Доцент кафедры методики преподавания иностранных языков Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, кандидат педагогических наук

Умение учиться является одной из восьми компетенций, выделенных ЕС, которая включает в себя мотивацию и способность организовывать и регулировать собственное обучение как индивидуально, так и в группах. Это умение включает в себя способность эффективно управлять своим временем, решать проблемы, приобретать, обрабатывать, оценивать и усваивать новые знания, а также применять новые знания и навыки в различных ситуациях – дома, на работе, в учебных заведениях и в процессе обучения. В более широком смысле умение учиться оказывает большое влияние на процесс управления собственной карьерой.

“Умение учиться” должно стать важной частью повседневной жизни в особенности у учащихся средних школ. Однако достичь этой цели оказывается очень сложно. Для большинства школьных учителей остается неясным, как “умение учиться” должно быть активизировано и реализовано.